

### ԵՐԱՆՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆՑ

«Իրավունքի Եվրոպա Միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ավագ իրավախորհրդատու, փաստաբան

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սահմանադրական սկզբունքները հանդիսանում են հիմնարար գաղափարներ (գաղափարների համակցություն), որոնց պահպանման աստիճանից ուղղակիորեն կախված է դատական իշխանության գործունեության արդյունավետությունը, կայունությունը և զարգացումը:

Հնդվածում ուսումնասիրվում է իրավունքի սկզբունքի, սահմանադրական սկզբունքների հասկացությունը, կանոնների ու սկզբունքների դասակարգումը և վերջիններիս նշանակությունը դատական իշխանության ձևավորման, կայացման և զարգացման համար: Իրավունքի նորմի բաժանումը? կանոնների ու սկզբունքների, դիտարկվում է արևմտյան իրավագիտության մեջ ընդունված դասակարգմամբ, միաժամանակ անդրադարձ կատարելով խորհրդային և հետխորհրդային իրավագիտության մեջ տարածված իրավունքի սկզբունքների հասկացության սահմանմանը և դասակարգմանը:

Հնդվածում անդրադարձ է կատարվում սահմանադրական սկզբունքների նշանակությանն ու կարևորությանը (իրականացված դատաիրավական բարեփոխումների բոլոր փուլերում) դատական իշխանության կազմակերպման ու գործունեության համար և համալիր ու համեմատական վերլուծության արդյունքում տրվում է սահմանադրական սկզբունքների հասկացության սահմանումը և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

*Հիմնարար սկզբունք, սահմանադրական սկզբունք, հավասարակշռում, դատական իշխանություն, դատաիրավական բարեփոխում:*

Սահմանադրական սկզբունքները հանդիսանում են դատական իշխանության կազմակերպման և գործունեության հիմնարար գաղափարներ, որոնց պահպանման աստիճանից ուղղակիորեն կախված է դատական իշխանության գործունեության արդյունավետությունը, կայունությունը, ներդաշնակությունը: Նախքան սահմանադրական սկզբունքի հասկացության ամրագրումը, կարծում ենք, անհրաժեշտ է ընդհանրապես հասկանալ իրավունքի սկզբունքի էությունը: Վ.Ս. Ներսեսյանցն իրավական համակարգում իրավունքի սկզբունքները նկարագրում էր որպես «կյանքի ուժի», «ինքնակարգավորվող համակարգի» դեր ունեցող երևույթ, որն ապահովում է իրավական համակարգի բոլոր տարրերի միասնությունը, կայունությունը և համաձայնեցվածությունը (1983): Ն.Ն. Վոպլենկոն համարում է, որ իրավունքի սկզբունքը մի կողմից հանդես է գալիս որպես իրավագիտակցության կատեգորիա, այսինքն՝ որպես առաջնորդող գաղափար, իսկ մյուս կողմից հանդիսանում է նորմատիվ բնույթի դրույթ, որը հիմնական գաղափարների համակարգի միջոցով խտացված կերպով արտահայտում է իրավունքի գաղափարական բովանդակությունը (1998): Ս.Ս. Ալեքսեևն իրավունքի սկզբունքները դիտարկում է որպես ելակետային համընդգրկող գաղափարներ, հիմունքներ, որոնք արտահայտում են իրավունքի բովանդակության

մեջ որոշիչ դերը, կարևորությունը, առաջին հերթին իրավական նորմերում ամրագրումը, որը հատուկ է բոլոր իրավական երևույթներին և իրավական կարգավորման ամբողջ մեխանիզմին (1972):

Ընդհանուր առմամբ, հետխորհրդային գիտության մեջ տարածված են սկզբունքների հասկացության ընդհանրական ձևակերպումներ: Գ.Ի. Մուրոմցևը սկզբունքները դիտարկում է որպես հիմնարար գաղափարների համակցություն (Ներսեսյանց, 1999): Ա.Վ. Մալկոն սկզբունքները դիտարկում է որպես գաղափարներ, որոնք արտահայտում են իրավունքի օրինաչափությունը, բնույթը և սոցիալական նշանակությունը (2000): Մ.Ն. Մարչենկոն նշում է, որ իրավունքի սկզբունքները իրենցից ներկայացնում են հիմնական գաղափարներ, ելակետային դրույթներ կամ իրավունքի կազմավորման, զարգացման և ֆունկցիոնալության գործընթացի ուղղորդող հիմքեր (2004):

Կարելի է նշել, որ իրավունքի սկզբունքները պետք է ձևակերպվեն որպես իրավական իրականության հիմնական գաղափարներ, որոնք հիմնված են նյութական աշխարհի օբյեկտիվ իրականության զարգացման վրա, իրավաբանորեն ամրագրված կամ պաշտոնապես ճանաչում ունեն համապատասխան իրավական համակարգում: Իրավունքի սկզբունքները հանդես են գալիս որպես յուրօրինակ հենարան, որի վրա ոչ միայն հիմնվում և

www.journal.lawinstitute.am

ամրագրվում են առանձին իրավունքի նորմերը, ինստիտուտները, այլ նաև իրավունքի ամբողջ համակարգը: Սկզբունքների պահպանման աստիճանից ուղղակիորեն կախված է իրավական համակարգի արդյունավետությունը, կայունությունը և ներդաշնակությունը: Իրավունքի սկզբունքներն ունենալով համապարտադիր բնույթ՝ նպաստում են իրավունքի տարբեր ոլորտների և ինստիտուտների, իրավական հարաբերությունների ու իրավունքի նորմերի սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքի ներքին միասնականության և փոխներգործության ամրապնդմանը (Մարչենկո, 2004):

Տեսական գրականության մեջ սկզբունքները տարանջատվում են տարբեր հիմքերով և չափանիշներով: Գործողության ոլորտից կախված՝ տարանջատվում են ընդհանուր, միջճյուղային և ճյուղային սկզբունքների (Յավիչ, 1976, Վոպլենկո, 1998, Մարչենկո, 2004): Ընդհանուր (կամ համընդհանուր) իրավունքի սկզբունքները (տվյալ հասկացությունները համահավասար են, Չերդանցև, 1999) տարածվում են իրավունքի ամբողջ համակարգի վրա և որոշում են նրա բնույթը, բովանդակությունը, առավել կարևոր հատկությունները և հատկանիշները: Այստեղ հիմնականում նշում են սոցիալական արդարության, հումանիզմի, իրավահավասարության, ժողովրդավարության սկզբունքները և այլն:

Միջճյուղային իրավունքի սկզբունքները երկու կամ ավելի ճյուղեր են ընդգրկում: Այս սկզբունքների տարածումը ավելի քիչ է, քան համընդհանուրինը, սակայն առավել է ճյուղայինից: Միջճյուղային իրավունքի սկզբունքներ են օրինակ, կողմերի մրցակցության, գործերի քննության հրապարակայնության, դատական քննության բանավորության սկզբունքները, որոնք կիրառելի են դատավարական իրավունքի բոլոր ճյուղերի նկատմամբ (քրեական, քաղաքացիական, վարչական, սահմանադրական դատավարություն): Բնականաբար, միջճյուղային իրավունքի սկզբունքների վրա ամբողջությամբ տարածվում են ընդհանուր իրավունքի սկզբունքները և յուրաքանչյուր ճյուղում այն ձեռք է բերում իր առանձնահատկությունը:

Ճյուղային իրավունքի սկզբունքները գաղափարների համակարգ է, որը բնորոշ է տվյալ իրավունքի ճյուղին: Դրանք պայմանավորված են տվյալ ճյուղի համակարգին հատուկ իրավական կարգավորման առարկայի ու մեթոդի առանձնահատկություններով: Քրեական դատավարության իրավունքում ամրագրվել են օրինականության, օրենքի և դատարանի առջև հավասարության, անձի իրավունքների, ազատությունների և արժանապատվության հարգման, իրավաբանական օգնության իրա-

վունքի ապահովման, անձի, բնակարանի, գույքի անձեռնմխելիության, անմեղության կանխավարկածի սկզբունքները և այլն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ գլուխ): Աշխատանքային իրավունքում ամրագրված են աշխատանքի ազատության, ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելման, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության, յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի արդարացի պայմանների իրավունքի ապահովման սկզբունքները և այլն (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդված):

Պրոֆեսոր Ռոբերտ Ալեքսիս սկզբունքները դիտարկում է որպես կանոնակարգեր, որոնք անհրաժեշտ է օպտիմալացնել (optimization requirement) (2010): Ընդ որում, Ռ. Ալեքսիս կարևորում է հավասարակշռումը (համաչափության փորձարկումը), որի միջոցով որոշվում է, թե վերացական մակարդակում հավասար կարգավիճակ ունեցող սահմանադրական որ իրավունքը կունենա առավել մեծ կշիռ և առաջնահերթություն իր հետ մրցակցող, մեկ այլ սահմանադրական իրավունքի հետ՝ կյանքի կոնկրետ իրավիճակներում՝ գործի փաստական և իրավական հանգամանքների լույսի ներքո: Հեղինակի կարծիքով, հենց հավասարակշռման միջոցով է սահմանվում մեկ սկզբունքի պահանջների բավարարման բավարար մակարդակն այլ սկզբունքների պահանջների հանդեպ (2010): Թե որ սկզբունքը կստանա առավելություն, կախված է կոնկրետ գործի հանգամանքներից՝ «այլ հանգամանքների դեպքում առաջնահերթության հարցը պետք է վերանայվի» (Ալեքսիս, 2010):

Համաչափության փորձարկման միջոցով սկզբունքների միջև հավասարակշռման հասնելը Ռ. Ալեքսիս համարում է սկզբունքների իրացման բնորոշ ձև (2008): Մրցակցող սահմանադրական իրավունքների հավասարակշռումը համաչափության փորձարկման միջոցով երևում է «Տիտանիկ» գործով Գերմանիայի ֆեդերատիվ սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշմամբ (BVerfGE vol. 86, 1): Քանի որ Գերմանիայում համաչափությունը ճանաչված է որպես չգրված սահմանադրական սկզբունք, որը ձևավորվում է իրավունքի գերակայության և սահմանադրական դատարանի պրակտիկայից, Գերմանիայի ֆեդերատիվ սահմանադրական դատարանի որոշումների համապատասխանությունը համաչափության սկզբունքին սահմանադրականության կարևորագույն չափանիշն է (Էլլիս, 2000): «Տիտանիկ» գործով Սահմանադրական դատարանը քննարկում էր «Տիտանիկ» երգիծական ամսագրի բողոքը ֆեդե-

րատիվ դատարանի կողմից ընդունած որոշման դեմ, որով դատարանը վճռել էր 12.000 գերմանական մարկի չափով տուգանել ամսագրի խմբագրությանը, քանի որ ամսագրում տպագրել էր սպալի նկար, ով ուներ ստորին վերջույթների կաթված, ում անվանել էին «բնածին մարդասպան» և «խեղված»: Այս գործով դատարանն իրականացրել է «յուրահատուկ հավասարակշռում» խոսքի և տպագրության ազատության (Գերմանիայի Հիմնական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս) և անձի անձեռնմխելիության (Գերմանիայի Հիմնական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս) իրավունքի միջև, ինչպես նաև Գերմանիայի Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված անձի արժանապատվության անձեռնմխելիության պաշտպանության պետության պարտականության միջև (Ալեքսի, 2003):

Հատկանշական է, որ պրոֆեսոր Ռ. Ալեքսին սահմանադրական իրավունքում առկա հիմնարար դրույթները դասակարգում է կանոնների և սկզբունքների: Ընդ որում, այդ դասակարգումը կատարում է ոչ թե իրավական նորմի վերացական աստիճանի չափով, ինչպես Ջ. Ռազը, Ջ. Քրիստին, Ա. Միմոնիուսը, Մ. Վան Հուկը (2002), և քաղաքական արժեքի ու ուղեհիշի չափանիշով, ինչպես Ռ. Դվորկինը (1978), այլ այն հանգամանքով, թե իրավունքի նորմն իր բովանդակությամբ ամրագրում է փաստացի և իրավական թույլատրելի վարքագծի հաստատուն ծավալ, թե միայն պահանջում է, որ իրավունքի բոլոր սուբյեկտները ձգտեն առավելագույն ծավալով այն իրագործել (2010):

Ըստ Ռ. Ալեքսի՝ այս չափանիշի հիմքով հեշտությամբ կարելի է տարանջատել կանոնները և սկզբունքները: Այս հիմքով կանոններն այն իրավունքի նորմերն են, որոնք իրենց հիպոթեզում նշված հանգամանքների առկայության դեպքում նախատեսում են որոշակի (կոնկրետ) իրավական հետևանքներ, «այսինքն՝ որոշ նախադրյալների իրականացման ժամանակ որոշակիության բավարար աստիճանում ինչ-որ բան պահանջում են, արգելում են, թույլատրում կամ օժտում են որևէ լիազորություններով» (Ալեքսի, 2008): Կանոնի էական չափանիշն իրավունքի սուբյեկտի հնարավոր վարքագծի հաստատուն ծավալի առկայությունն է՝ կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում: Այդպիսի նորմերը իրավական համակարգի հիմնական մասն են կազմում (Հուկ, 2002): Սակայն, ոչ բոլոր իրավունքի նորմերն են կարգավորում հասարակական հարաբերություններն անմիջականորեն: Այսպիսի նորմերին հատուկ չեն որոշ պայմաններ, որոնք հատուկ են իրավունքի նորմի դասական մոդելին: Հենց այդպիսի իրավունքի նոր-

մերն էլ Ռ. Ալեքսին համակարգում և անվանում է սկզբունքներ: Սկզբունքներ են հանդիսանում այն սահմանադրաիրավական նորմերը, որոնք ամրագրում են մարդու և քաղաքացու հիմնական սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:

Այսպիսով, իրավունքի սկզբունքներն ունեն կարևորագույն նշանակություն իրավական գիտության և գործող իրավական համակարգի զարգացման համար: Հետևաբար, դատական համակարգի ամրապնդման համար նույնպես կարևորագույն նշանակություն ունեն սկզբունքների ամբողջությունը, որոնք դրված են դատական համակարգի լիազորությունների և իրավասության, ինչպես նաև դատական համակարգի ընթացակարգերի, այդ համակարգի կրողների (դատավորներ) կարգավիճակի, իշխանության այլ ճյուղերի և պետության ու հասարակության տարբեր կառույցների համագործակցության մեխանիզմների նորմատիվ ամրագրման հիմքում, իսկ սահմանադրական սկզբունքներն այս դեպքում բացահայտում են դատական իշխանության հիմնական բովանդակությունը, նշանակությունը, այն հատկանիշները, որոնք տարբերակում են դատական իշխանությունն իշխանության մյուս ճյուղերից: Այս սկզբունքների հիմնական նպատակն է ինքնուրույն և արդյունավետ դատական իշխանության գործունեության իրականացման ապահովումը, որի արդյունքը պետք է լինի դատական վեճերի արդար և օրինական լուծումը, մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը, սոցիալական համերաշխության և կայունության պահպանումը:

Հայաստանի Հանրապետության դատական իշխանության ձևավորման, կայացման և զարգացման համար սահմանադրական սկզբունքների նշանակությանն ակնհայտորեն դրսևորվել է իրականացված դատաիրավական բարեփոխումների յուրաքանչյուր փուլում: Այսպես, Հայաստանի Հանրապետության նոր համակարգի ձևավորման և հետագայում դրա կայացման իրավաքաղաքական հիմքերը դրվեցին 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված «Անկախության մասին» հռչակագրով, որով ամրագրվեց պետության կազմակերպման հիմնական՝ իշխանությունների տարանջատման սկզբունքը: Արդյունքում, արդեն 1991 թվականից սկսած հանրապետության օրենսդրությունում կատարվեցին մի շարք փոփոխություններ, որոնք նպատակ էին հետապնդում կյանքի կոչել Հռչակագրի դրույթները, այդ թվում նաև ապահովել դատավորների անկախությունը և բարձրացնել դատարանների դերն ու հեղինակությունը: Այսպես, «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունմամբ

(25 սեպտեմբեր 1991թ.) սահմանադրական մակարդակով ամրագրեց, որ «Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը» (հոդված 3-րդ) և «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության մարմինների համակարգը, իրավասությունների շրջանակը և փոխհարաբերությունների հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» (հոդված 6-րդ): Եվ ամենակարևորը, կարծում ենք, սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածն էր, որի համաձայն՝ «Մինչ Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը՝ գործող սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի վրա ընդունված օրենսդրական ակտերին»: Ըստ էության այս դրույթներով նախատեսվում էր «դատական հայեցողության» ինստիտուտը, այսինքն՝ դատավորներն իրենց հայեցողությամբ կարող էին որոշել «նախկին օրենսդրության» դրույթների համապատասխանության հարցը, ինչը բավականին լուրջ երաշխիք էր դատավորների ինքնուրույնության տեսակետից: Այնուամենայնիվ պրակտիկայում նշված դատական հայեցողությունը չկիրառվեց, ինչը, կարծում ենք, պայմանավորված էր ինչպես խորհրդային ժամանակահատվածի ժառանգությամբ, երբ դատարանները օժտված չէին անկախությամբ և ինքնուրույնությամբ, այնպես էլ նոր կարգավորումների իրականացման գիտակցման ցածր մակարդակով:

Դատախիրավական բարեփոխումների երկրորդ փուլի ժամանակ (1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրություն) Սահմանադրությամբ ամրագրվեց մինչ այդ արդեն իսկ ճանաչված իշխանությունների տարանջատման սկզբունքը, Սահմանադրության 6-րդ գլուխն ամբողջությամբ մվիրված էր դատական իշխանությանը, Սահմանադրությամբ ամրագրվեցին անկախ և ինքնուրույն դատական իշխանության ստեղծման անհրաժեշտ նախադրյալները: Սահմանադրությունը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է իրավունքի գերակայությունը, արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արգելվում է արտակարգ դատարանների ստեղծումը, անձի կալանավորումը, բնակարանի խուզարկությունը և անձի սահմանադրական մի շարք իրավունքների սահմանափակումը կարող են կատարվել միայն դատարանի միջոցով, դատա-

կան մարմինների անկախության երաշխավորը հանրապետության նախագահն է և դատական համակարգի կազմավորման ու գործունեությանը վերաբերող մի շարք այլ կարևորագույն սկզբունքներ: Այս շարքից առանձնակի ուշադրության է արժանի իրավունքի գերակայության սկզբունքը, որի իրականացման, ինչպես նաև՝ դատական իշխանության ինքնուրույնության կայացման համար մեծագույն նշանակություն ունեն ՀՀ Սահմանադրական դատարանի հիմնադրումը:

Դատախիրավական բարեփոխումների իրականացման երրորդ փուլով (2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական հանրաքվե) մի շարք էական փոփոխություններ կատարվեցին նաև Սահմանադրության «Դատական իշխանություն» գլխում: Երրորդ փուլի դատախիրավական բարեփոխումների հիմնական, առանցքային խնդիրներից էր դատական համակարգի կատարելագործումը, դատական իշխանության անկախության և ինքնավարության երաշխիքների ամրագրումը, արդարադատության բարձրացումը, պրոֆեսիոնալ դատավարական կուրսի ձևավորումը: Սահմանադրությամբ ընդգծվեց, որ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: Փոփոխված սահմանադրական նորմերի հիման վրա ընդունվեց ՀՀ դատական օրենսգիրքը, որի հիմնադրույթներով ամրագրվեց դատարանների անկախությունը և դատավորների ինքնուրույնությունը, ինչպես նաև՝ դատական իշխանության ինքնավարությունը: Սահմանադրական փոփոխությունները վերաբերում էին նաև ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունների և սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտներին: Եթե նախկինում Սահմանադրական դատարան կարող էին դիմել միայն հանրապետության նախագահը, պատգամավորների առնվազն մեկ երրորդը, հանրապետության նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, կառավարությունը՝ Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ապա փոփոխությունների արդյունքում ավելացան ոչ միայն սուբյեկտները, այլև ճշգրտվեցին այն հիմքերը, որոնց հիման վրա կարող են դիմել սահմանադրական դատարան թե նախկին, այնպես էլ փոփոխությունների արդյունքում սահմանված սուբյեկտները:

Անհատական սահմանադրական զանգատի ինստիտուտի կատարելագործումը շարունակվեց նաև Հայաստանի Հանրապետության դատական համակարգի չորրորդ փուլի ընթացքում. 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամ-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

րագրված «նորմատիվ սահմանադրական գանգատի» ինստիտուտը կրում էր խիստ սահմանափակ բնույթ, և անհատները սահմանադրական դատարան կարող էին դիմել միայն՝

- 1) կոնկրետ գործով,
- 2) երբ առկա է դատարանի վերջնական ակտը,
- 3) սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները,

4) վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Ընդ որում, անհատը կարող էր վիճարկել համապատասխան ակտով իր նկատմամբ կիրառված միայն օրենքի դրույթի սահմանադրականությունը, ինչն իջեցնում է հիմնական իրավունքների արդյունավետ պաշտպանության շեմը, քանի որ իրավունքները խախտվում են ոչ միայն օրենքի դրույթի, այլ Սահմանադրությանը հակասող այլ նորմատիվ ակտերի, օրինակ՝ կառավարության որոշումների կիրառմամբ: Արդյունքում ամրագրվեց, որ կարող է վիճարկվել կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»: Այս կապակցությամբ հարկ ենք համարում շեշտել «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից բազմիցս արձանագրված այն հանգամանքը, որ Վենետիկի հանձնաժողովը կողմնակից է ամբողջական սահմանադրական գանգատի ինստիտուտին՝ ոչ միայն այն պատճառով, որ այդ ինստիտուտն ապահովում է սահմանադրական իրավունքների ամբողջական պաշտպանություն, այլ նաև այն պատճառով, որ վերջինս սուբսիդիար բնույթ է ձեռք բերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրամադրվող պաշտպանության տեսանկյունից, և մարդու իրավունքներին առնչվող խնդիրների լուծումն ապահովվում է ազգային մակարդակում: Ընդ որում, մի շարք պետություններում իրականացվող՝ սահմանադրական արդարադատությանն առնչվող բարեփոխումների կապակցությամբ ընդգծվել է, որ պետք է ներդրվի անհատական ակտերի միջոցով մարդու իրավունքների բոլոր խախտումների առումով ամբողջական սահմանադրական գանգատի ինստիտուտ: Վենետիկի հանձնաժողովը նշել է նաև, որ կարևոր է հստակ ամրագրել, որ սահմանադրական դատարանն ունի անհատական ակտերը (ինչպես վարչական, այնպես էլ դատական) անվավեր ճանաչելու, վարույթի վերաբացում պահանջելու և

անհրաժեշտության դեպքում փոխհատուցում նախատեսելու իրավասություն:

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի չորրորդ փուլի զարգացման և կատարելագործման հիմքերը դրվել են «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի N ՆԿ-96-Ա կարգադրությամբ և ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի ներկայացմամբ, դրա հանրային քննարկումներով և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ընդունմամբ: ՀՀ Սահմանադրական բարեփոխումների ծրագրում հատուկ շեշտված էր, որ Սահմանադրական բարեփոխումների առաջնահերթ հայեցակարգային խնդիրներից մեկն անկախ, ինքնուրույն և օրենքի առջև հաշվետու դատական իշխանության կայացումն է:

Ի տարբերություն իշխանության մյուս ճյուղերի՝ դատական համակարգի կառուցվածքը Սահմանադրության փոփոխություններով չի փոփոխվել, թեև 2014 թվականի ապրիլին հրապարակված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում առաջարկվում էր անցում կատարել երկաստիճան դատական համակարգի, հանրաքվեի դրված տեքստում պահպանվեց գործող եռաստիճան համակարգը: Մանրամասն կարգավորվեց դատավորների կարգավիճակի վերաբերյալ դրույթները, նշանակման և լիազորությունների դադարեցման կարգը, պաշտոնավարման ժամկետի նշված փոփոխությունները, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի կազմին, կազմավորման կարգին և լիազորություններին վերաբերող իրավակարգավորումները: Սահմանադրության փոփոխություններով ամրագրվել է նաև արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար դատավորին պատասխանատվության ենթարկելու արգելքը, ինչը դրական փոփոխություն է, այդ թվում նաև՝ դատավորների ինքնուրույնության ամրապնդման տեսակետից: Միաժամանակ, 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում պաշլամենտական ընդդիմությունը ստացավ հնարավորություն ազդելու դատավորների ընտրության ընթացքին, ինչը հնարավորություն ստեղծեց քաղաքական մարմնին ներգործել դատավորի նշանակման գործընթացին: Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության գործընթացի քաղաքականացման վտանգը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև նկատի ունե-

www.journal.lawinstitute.am

նալով, որ Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման հարցում Հանրապետության Նախագահին վերապահվել է արարողակարգային դեր, գտնում ենք, որ դատական իշխանության ինքնուրույնության հայեցակետից առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի Հանրապետության Նախագահը ընտրեր և նշանակեր դատավոր՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ յուրաքանչյուր տեղի համար ներկայացված երեք թեկնածուներից մեկին: Միաժամանակ, հաշվի առնելով առկա կարգավորումները, նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրությամբ (2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխությունների), «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծով ներկայացված չեն ընտրության ընթացքում անհրաժեշտ ձայների քանակ չհավաքելու դեպքերի (3/5) հաղթահարման մեխանիզմները, կարծում ենք անհրաժեշտ է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով մանրամասն սահմանել Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրության ընթացքում անհրաժեշտ ձայների քանակ չհավաքելու դեպքերի (3/5) հաղթահարման մեխանիզմները:

Այսպիսով, ակնհայտ է դատաիրավական բարեփոխումների յուրաքանչյուր փուլում դատական իշխանության ձևավորման, կայացման և զարգացման հիմքում ընկած սահմանադրական սկզբունքների նշանակությունն ու դերը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սահմանադրական սկզբունքները դատական իշխանության կազմակերպման և գործունեության հիմնարար գաղափարներն են, որոնք չունեն հաստատուն ծավալ, կախված են փաստական և իրավական հանգամանքներից, կարիք ունեն դիմամիկ զարգացման և մեկնաբանման, ամրագրված են սահմանադրական և այլ իրավական ակտերի նորմերում կամ բխում են դատական իշխանության իրավական բնույթից և բովանդակությունից, սակայն մեկը մյուսի նկատմամբ առավելությամբ օժտված չեն, ունեն հիմնարար ազդեցություն դատական իշխանության, որպես պետական իշխանության առանձին ինքնուրույն ճյուղի գործունեության ու կազմակերպման հարցում, և վերջինների պահպանման աստիճանից ուղղակիորեն կախված է դատական իշխանության գործունեության արդյունավետությունը, կայունությունը, ներդաշնակությունը:

*ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2005 թ. նոյեմբերի 27-ին՝ հանրաքվեով: ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, հոդ. 1426:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ: Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ին՝ հանրաքվեով: ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, հոդ. 1118:
3. «Անկախ պետականության հիմնադրությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, N18 (998), 30 սեպտեմբերի 1991թ., հոդվ. 402:
4. «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրի բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի N ՆԿ-96-Ա կարգադրություն: ՀՀՊՏ 2012.07.11/33(907) Հոդ.827:
5. ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumnner/hayecakarg.pdf> (վերջին այցելություն 15.10.2017թ.):
6. Այվազյան Ն.Ա. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք առաջին: Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջեր 34-35:
7. Алексеев С.С. Проблемы теории права. - Свердловск, 1972.Т.1, С. 105.
8. Вошленко Н.Н. Сущность, принципы и функции права. - Волгоград. 1998, С. 34.
9. Малько А.В. Теория государства и права. - М.,2000, С. 111.
10. Нерсесянц В.С. Право и закон,- М., 1983, С. 342-343.
11. Проблемы общей теории права и государства/ Под общей ред. В.С. Нерсесянца. - М., 1999, С. 277.
12. Теория государства и права: Учебник /Под ред. М.Н. Марченко - М.,2004. С. 519.
13. Черданцев А.Ф. Теория государства и права. - М., 1999. С. 187.
14. Явич Л.С. Общая теория права. - Л., 1976. С. 155.
15. CDL-AD(2010)039rev Study on individual access to constitutional justice, paragraphs 3, 79-80, [http://www.venice.coe.int/WebForms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)039rev-e](http://www.venice.coe.int/WebForms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)039rev-e) (վերջին այցելություն 24.01.2017թ):

www.journal.lawinstitute.am

16. CDL-AD(2013)034 Opinion on Proposals Amending the Draft Law on the Amendments to the Constitution to strengthen the independence of judges of Ukraine, paragraph 11, [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2013\)034-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2013)034-e) (վերջին այցելություն 15.10.2017թ):
17. CDL(2015)024, DRAFT COMPILATION OF VENICE COMMISSION OPINIONS, REPORTS AND STUDIES ON CONSTITUTIONAL JUSTICE, paragraph 5.2.1, [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2015\)024-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2015)024-e) (վերջին այցելություն 15.10.2017թ):
18. Institutional Reason. The Jurisprudence of Robert Alexy / ed. by Matthias Klatt. New York.: Oxford University Press, 2012. 384 p.
19. Mark Van Hoecke. Law as Communication. Hart Publishing, 2002, P. 168.
20. Principle of Proportionality in Laws of Europe / ed. by Evelyn Ellis. Portland. Oregon: Hart Publishing. 2000. P. 45.
21. R. Alexy. Constitutional rights, Balancing and Rationality // Ratio Juris. Vol.16. No. 2. June 2003. P. 137.
22. Robert Alexy. Theory of Constitutional Rights. New York.: Oxford University Press, 2010. p. 47 – 48.
23. Robert Alexy. On the concept and the nature of law. Ratio Juris 21 (3). 2008. P. 281-299.
24. Ronald Dworkin. Taking Rights Seriously. Cambridge, MA: Harvard University Press.: 1978. P. 51.

Երանուի Թումանյան

Старший юрисконсульт правозащитной общественной организации «Ассоциация Европа в праве», адвокат

#### ՔԵԶԻՕՄԵ

##### *Понятие и значение Конституционных принципов для судебной власти*

Конституционные принципы - это фундаментальные идеи (комплекс основополагающих идей), от уровня соблюдения которых напрямую зависит эффективность, стабильность и развитие судебной власти.

В статье рассматриваются понятия принципа права, конституционных принципов, деление норм права на правила и принципы и их значение для формирования, становления и развития судебной власти. Рассматриваются основные критерии деления норм права на правила и принципы, принятые в зарубежной юриспруденции, в то же время рассматривается определение и классификация понятия принципов права в советском и постсоветском праве.

В статье рассматривается значение и важность конституционных принципов (на всех этапах судебных реформ) организации и функционирования судебной системы и в результате комплексного и сравнительного анализа дается определение понятия конституционных принципов и предложения по совершенствованию законодательства.

**Ключевые слова:** принцип, конституционный принцип, балансирование, судебная власть, судебная реформа.

Yeranuhi Tumanyants

Senior legal advisor of «Europe in Law Association» non-governmental organization, advocate

#### SUMMARY

##### *Concepts and value of the Constitutional principles for judicial authority*

The constitutional principles are fundamental ideas (a complex of the fundamental ideas) on which observance level the efficiency, stability and development of judicial authority directly depends.

In article concepts of the principle of the right, the constitutional principles, division of rules of law into rules and the principles and their values for formation, formation and development of judicial authority are considered. The main criteria of division of rules of law into the rules and the principles accepted in foreign law at the same time reviewing the considering definition and classification of a concept of the principles of the right of the Soviet and Post-Soviet right.

In article the value and importance of the constitutional principles (at all stages of judicial reform) of the organization and functioning of judicial system is considered and as a result of the complex and comparative analysis definition of a concept of the constitutional principles proposals for improving legislation is given.

**Keywords:** the rule, the principle, the constitutional principle, balancing, judicial reform.